

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ**



**ԿԱԶՄԵՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՄԵՆՅԱՆԸ:**

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՂԵԿՏԵՍԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 42-Ն ՈՐՈՇՄԱՄԲ:**


ԳՅՈՒՂ ԻՍԱՀԱԿՅԱՆ - 2016 ԹՎԱԿԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 42-Ն
ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ



ԿԱԶՄԵՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՄԵՆՅԱՆԸ:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 42-Ն ՈՐՈՇՄԱՆՄԷ:

Բովանդակություն

1. Ներածություն..... **Error! Bookmark not defined.**
2. ՀՀԶԾ կառուցվածքը..... **Error! Bookmark not defined.**
 - 2.1. Համայնքի իրավիճակի նկարագրություն **Error! Bookmark not defined.**
 - 2.1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն **Error! Bookmark not defined.**
 - 2.1.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ **Error! Bookmark not defined.**
 - 2.1.3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումներ**Error! Bookmark not defined.**
 - 2.1.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում..... **Error! Bookmark not defined.**
 - 2.1.5. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ**Error! Bookmark not defined.**
 - 2.1.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն..... **Error! Bookmark not defined.**
 - 2.2. Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում**Error! Bookmark not defined.**
 - 2.2.1. Համայնքի զարգացման հեռահար նպատակի (տեսլականի) սահմանում**Error! Bookmark not defined.**
 - 2.2.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակների սահմանում**Error! Bookmark not defined.**
 - 2.2.3. ՀՀԶԾ հեռահար նպատակը (տեսլականը) և անմիջական նպատակներն ապահովող ծրագրերի նկարագրություն..... **Error! Bookmark not defined.**
 - 2.3. ՀՀԶԾ ֆինանսավորում..... **Error! Bookmark not defined.**
 - 2.4. ՀՀԶԾ մոնիթորինգ **Error! Bookmark not defined.**
3. ՀՀԶԾ վերաբերյալ իրազեկում..... **Error! Bookmark not defined.**
4. ՀՀԶԾ իրականացումը **Error! Bookmark not defined.**
5. ՀՀԶԾ գնահատում..... **Error! Bookmark not defined.**
6. ՀՀԶԾ կազմման գործընթացը..... **Error! Bookmark not defined.**

Աղյուսակ 1 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը նկարագրող ցուցանիշներ**Error! Bookmark not defined.**

Գծապատկեր 1 ՀՀԶԾ նպատակների, միջանկյալ արդյունքների և գործողությունների սահմանման հերթականությունը..... **Error! Bookmark not defined.**

Գծապատկեր 2 Տրամաբանական հենք **Error! Bookmark not defined.**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Իսահակյանի համայնքի 2016-2021 թվականների զարգացման ծրագիրը մշակված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է համայնքի համալիր զարգացմանն ուղղված ռազմավարական ուղեցույց փաստաթուղթ:

ՀՀԶԾ-ն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ: Այն նախատեսում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և բյուջետավորման նպատակային գործընթացի իրականացումը: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Այն կարող է հաշվի առնվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության և սահմանամերձ բնակավայրերի զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագրերում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ուժեղ և թույլ կողմերը, դասակարգվել են առաջնային և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները, վերլուծվել են համայնքի ֆինանսական, աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսներն ու տնտեսական հնարավորությունները: Առաջադրվել են ծրագրային աշխատանքներ, որոնցում տրվել են առկա հիմնախնդիրների նկարագրությունները, լուծման ուղիները, պահանջվող ֆինանսական միջոցները, ֆինանսավորման աղբյուրները, ակնկալվող արդյունքները, կենսունակության ապահովման պայմանները, ինչպես նաև կատարման ժամկետներն ու պատասխանատուները: Կատարվել են սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են համայնքի ներկա իրավիճակը բնութագրող վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում կախված արտաքին ու ներքին գործոնների ազդեցությունից կարող են ենթարկվել փոփոխությունների ու լրացումների:

ԻՍԱՀԱԿՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ



1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Իսահակյան գյուղը հիմնվել է 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո: Գյուղի սկզբնական անվանումը եղել է Խարամ, որը թուրքերենից թարգմանաբար նշանակում է խեղճ, թշվառ: Հավանաբար՝ այդ անվանումը գյուղը ստացել է բռնագաղթված ընտանիքների աղքատության ու թշվառության պատճառով:

Ռուս-Պարսկական պատերազմում ռուսական զորամիավորումների շարքերում իր քաջությամբ և հնարամտությամբ աչքի է ընկնում հայրուրապետ Ղազարը: Անվանի պատմաբան Լեոն հիշատակում է, որ Ղազարը արժանանում է ռուսական հրամանատարության խրախուսանքին, որից հետո դիմում է Իվան Պասկևիչին՝ օսմանյան կայսրության սահմանագլխին բնակարան կառուցելու խնդրանքով: Պասկևիչը բավարարում է Ղազարի խնդրանքը: Գյուղի տեղը ընտրելու համար Ղազարը հաշվի է առնում բազմաթիվ գործոններ, որից հետո այն հիմնում է դարավանդի փեշերին, Արփաչայի փեշին՝ պաշտպանված քամիներից և ապահովված ջրով:

Այստեղ հողը պարարտ էր, իսկ գետափները հարուստ խոտածածկույթով: Ղազարի օրինակին հետևում են Բայազետից, Խնուսից ու այլ վայրերից գաղթած տասնյակ հայ ընտանիքներ:


Գյուղը ի պատիվ նրա հիմնադրի կոչվում է Ղազարաբադ:

Գյուղն ունեցել է Ախուրյան գետի վրա կառուցված ջրաղաց, որն սպասարկել է նաև շրջակա գյուղերին:

Ավ. Իսահակյանի <<Համբերանքի չիբուխը>>հայտնի ստեղծագործությունում այսպես է հիշատակվում գյուղի ջրաղացը՝ <<Ահա՛ և Օհան-ամու ջաղացը: Այստեղ էր մի ժամանակ չիկչիկում Օհան-ամու ջաղացը: Առուն չորացել է հիմա, ջաղացը ավերվել է վաղուց, միայն երեք ուռի և մի բարդի է մնացել այն փոքր ծառուտից, որ տնկել էր Օհան-ամին ջաղացի շուրջը: ... Իր ձեռքով էր շինել Օհան-ամին ջաղացը և նրան կիպ տնակը, և իր ձեռքով էլ մշակում էր ոչ մեծ բոստանը, որ փոված էր ջաղացի շուրջը մինչև գետի եզերքը>>:

1949 թ. ՀՍՍՀ Գերագույն Խորհրդի որոշմամբ գյուղը վերանվանվել է հայ ազգային մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի անունով, որի ընտանիքը 19-րդ դարի կեսերին հաստատվել էր այտեղ: Ղազարաբադում է անցել մեծ բանաստեղծի մանկությունը և գրվել է նրա շատ գլուխգործոցներ, այդ թվում <<Աբու Լալա Մահարի>> պոեմը:

Գյուղում կառուցված է Ավ. Իսահակյանի հուշարձանը: Նոր ավանի կառուցման ծրագրում նախատեսված էր կառուցել նաև Ավ. Իսահակյանի տուն թանգարան, սակայն անհասկանալի պատճառներով այն չկառուցվեց:



Ավ. Իսահակյանի հուշարձանը Իսահակյան գյուղում

ԱՎԵՏԻՔ ՄԱՀԱԿԻ ԻՄԱՀԱԿՅԱՆ (կենսագրական տվյալներ)

____ Ավետիք Մահակի Իսահակյանը ծնվել է 1875թ. հոկտեմբերի 18-ին (նոր տոմարով՝ 30-ին) Գյումրի քաղաքից ոչ շատ հեռու գտնվող Ղազարապատ գյուղում (այժմյան՝ Իսահակյան): Մանկությունն անցել է Ալեքսանդրապոլում ու Ղազարապատ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի քաղաքում, այնուհետև սովորել է Ղփչախ գյուղի Հառիճա վանքի դպրոցում:

____ 1889-1892թթ սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որտեղ նրա ուսուցիչներն են եղել Կ. Կոստանյանը, Հ. Հովհաննիսյանը, Լ. Մանվելյանը և Ս. Լիսիցյանը:

____ 1892թ. «Տարազ» ամսագրում լույս է տեսել նրա առաջին բանաստեղծությունը՝ «Ծաղիկ էի նորաբողբոջ»:

____ 1893թ. մեկնել է Եվրոպա՝ բարձրագույն կրթություն ստանալու: Աշխատել է Վիեննայի անտրոպոլոգիայի թանգարանում, ապա տեղափոխվել է Գերմանիա և դարձել է Լայպցիգի համալսարանի ազատ ունկնդիր:

____ 1895թ. վերադարձել է հայրենիք:

____ 1896թ. Հայկական ազատագրական պայքարին մասնակցելու համար ձերբակալվել է և մեկ տարով բանտարկվել է Երևանի բանտում:

____ 1898-1899թթ ցարական իշխանությունների կողմից արստրվել է Օդեսա:

____ 1900թ. ապրել է Ժնևում, ապա՝ Ցյուրիխում:

____ 1901թ. սեպտեմբերին վերադարձել է հայրենիք:

____ 1908-1909թթ ձերբակալվել է՝ բանտարկվելով Թիֆլիսի Մետեխի բանտում:

____ 1909թ. ամուսնացել է:

____ 1911թ. անցել է ռուս-թուրքական սահմանը և հասել Կ. Պոլիս՝ խուսափելով իր դեմ պատրաստվող հերթական դատավարությունից:

____ 1911թ. Ցյուրիխում և Ժնևում ապրել է Ավետիս Բայազիթ կեղծանունով: Նկատենք, որ Իսահակյանի պապը՝ Նիկողայոսը, ծնունդով Կոզովիտ գավառի Դարոյնք (հետագայում Բայազեթ)

քաղաքից էր. նրանց տոհմը Բայազետում կոչվել է Կոլոտենք:

___ 1926թ. իր ընտանիքը փոխադրել է Փարիզ, իսկ նա վերադարձել է Հայաստան, որտեղ մնացել է մինչև 1930թ.:

___ 1930-1936թթ ապրել է Փարիզում, այնուհետև մշտական բնակության նպատակով մեկնել է Հայաստան:

___ 1936թ.-ից եղել է Հայկական աշխարհագրական ընկերության պատվավոր և ՍՍՀՄ գրողների միության անդամ:

___ 1943թ.-ից եղել է ՀՍՍՀ ԳԱԱ ակադեմիկոս:

___ 1946թ. եղել է ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր:

___ 1946-1957թթ եղել է Հայաստանի գրողների միության նախագահ:

___ 1945 և 1955թթ պարգևատրվել է Լենինի շքանշաններով:

___ 1957թ. հոկտեմբերի 17-ին մահացել է Երևանում և թաղվել է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

___ Առաջին համաշխարհային պատերազմը և Մեծ եղեռնը հաստատեցին Իսահակյանի ամենամոռյալ կանխատեսումները երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության վերաբերյալ: Նա ձեռամուխ է եղել հայերի ցեղասպանության մեղադրականի «Մպիտակ գրքի» ստեղծմանը, որի մի զգալի հատվածը տեղ է գտել 1915-1922թթ «Հիշատակարան» գրառումներով: Այդ ժամանակահատվածում Իսահակյանը հիմնականում հանդես է եկել հրապարակախոսական հոդվածներով, որոնց բովանդակությունը Հայկական հարցն էր:

___ Իսահակյանը եղել է ՀՍՍՀ 2-րդ և 4-րդ գումարումների Գերագույն Սովետի դեպուտատ: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են տարբեր լեզուներով:

Ախուրյանի ջրամբարի կառուցման կպակցությամբ գյուղը տեղահանվել է: 1976-80 թվականներին ջրամբարի կառուցմանը զուգահեռ կառուցվել է նոր ավան և գյուղը վերաբնակեցվել է տեղի բնակիչներով: Գյուղում եղել է 19-րդ դարի վերջին կառուցված եկեղեցի, որը խորհրդային տարիներին օգտագործվել է, որպես կոլտնտեսության հացահատիկի պահեստ: Բնակավայրի տեղահանման ժամանակ եկեղեցին ապամոնտաժվել է մեծ զգուշությամբ, քարերը համարակալվել և տեղափոխվել են Զրափի գյուղի տարածք, որտեղ նախատեսվում էր վերականգնել բոլոր այն եկեղեցիները, որոնք ջրամբարի կառուցման պատճառով ապամոնտաժվել էին: Սակայն այդ տարածքում վերականգնվել է միայն 1 եկեղեցի, իսկ ապամոնտաժված մյուս եկեղեցիների քարերը որպես սուրբ մասունքներ, միջև օրս մնում են կուտակված այդ տարածքում:

1981 թվականին Իսահակյան գյուղից 5 կմ հեռավորության վրա գտնվող Բարձրաշեն գյուղի /նախկին անվանումը Բաբոլու/ կոլտնտեսության լուծարման պատճառով, գյուղի բնակչության կեսը՝ թվով 48 ընտանիք, բնակություն է հաստատել Իսահակյան նորակառույց ավանում: Այժմ Բարձրաշեն գյուղի տարածքը և 450 հա վարելահողերը գտնվում է Իսահակյան գյուղի վարչական տարածքում:

Գյուղի նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի և Մուշի գավառների գյուղերից, իսկ մնացած մասը 1915 թվականի եղեռնի պատճառով ներգաղթել են Ղարսի նահանգի, Մուշ և Տարոն գավառների բնակավայրերից:



Իսահակյան գյուղի միջնակարգ դպրոցը



Խաչքար-աղբյուր



Գյուղի վարչականա տարածքում է գտնվում Պողոս-Պետրոս եկեղեցին, կառուցված 7 – րդ դարում և Աստվածածին եկեղեցին (10-13-րդ դարեր): Պողոս-Պետրոս եկեղեցին բարերարի հովանավորությամբ մասնակիորեն վերանորոգվել է 2005 թվականին, իսկ Աստվածածին եկեղեցին գտնվում քայքայված վիճակում:

Իսահակյան գյուղը գտնվում է Արագած լեռան արևմտյան մասում Ախուրյանի ջրամբարի հարևանությամբ, նախկին բնակավայրից 2 կմ արևելք: Իր հողային տարածքով սահմանակից է հարավային մասով Շիրակի մարզի Լուսաղբյուրի հողատարածքներին, հյուսիսային մասով Շիրակի մարզի Մարալիկի, Գուսանագյուղի, իսկ արևելյան մասով Աղինի հողատարածքներին, արևմտյան մասով սահմանակից է Թուրքիային, որից սահմանահատվում է Ախուրյանի ջրամբարով:

Գյուղն ՀՀ կառավարության որոշման համաձայն ընդգրկված է հանրապետության սահմանամերձ բնակավայրերի ցանկում,

Իսահակյան գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1530 մ բարձրության վրա: Մարզկենտրոն Գյումրիից հեռավորությունը կազմում է 21 կմ, Մարալիկ քաղաքից՝ 26կմ, իսկ մայրաքաղաքից 124 կմ:

1915-1920-ական թվականների թուրք հրոսակների արշավանքների հետևանքով Արևելյան Հայաստանի գյուղերի ու քաղաքների մեծ մասը կողոպտվել ու ավերվել են: 1918 թվականին նշված հրոսակախմբերը մեծ ոճրագործություններ են իրականացրել Կարսում, Շիրակում, Լոռի-Փամբակում և Հայաստանի այլ շրջաններում: Այդ ողբերգական, արյունալի էջերից անմասն չի մնացել նաև Ղազարաբաղը: Գյուղը մեծ սիրով ապաստան է տվել թուրքական յաթաղանից փրկված ավելի քան 100 արևմտահայ գաղթական ընտանիքների, որոնց սերունդներից շատերաը ներկայումս բնակվում են գյուղում:

1887 թվականից Ղազարաբաղը գտնվել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում: 1921 թվականին բնակավայրում հաստատվել են խորհրդային կարգեր և մինչև 1996 թվականը ընդգրկված է եղել Անիի շրջանի կազմում: 1996 թվականին, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային վերջին բաժանումից հետո, Իսահակյանը, որպես վարչական առանձին միավոր՝ ինքնուրույն համայնք, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կազմում: Համայնքի վարչական տարածքում է գտնվում նաև Բարձրաշեն գյուղը, որտեղ ներկայումս բնակվում են թվով 12 ընտանիք՝ 42 բնակչությամբ, որոնք հաշվառված են Մարալիկ քաղաքում:

Բնակավայրի հիմնադրումից ի վեր բնակչության հիմնական զբաղմունքը եղել և մնում անասնապահությունը, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությունը: Առանձին տնտեսություններ զբաղվում են թռչնաբուծությամբ, մեղվապահությամբ և բանջարաբուստանային մշակաբույսերի մշակությամբ:



Գյուղապետարանի շենք



Բուժ. մանկաբարձական կետ

Իսահակյան գյուղն իր զարգացումն հիմնականում ապրել է նոր ավանի կառուցումից հետո: Գյուղում կառուցվել է միջնակարգ դպրոց, ակումբ, բուժ. կետ, խանութ, հանրային սննդի օյեկտ, մանկապարտեզ, կենցաղի տուն, վարչական շենք, կաթի գործարան, անասնապահական և գյուղատնտեսական նշանակության տասնյակ օբյեկտներ: Կայուն տնտեսական աճ է ունեցել Իսահակյանի սկզբնական շրջում՝ կոլեկտիվ, ապա խորհրդային տնտեսությունը: Այն աչքի է ընկել հատկապես կաթի և մսի արտադրության բարձր ցուցանիշներով:

1960-ական թվականներից հետո համայնքի աշխատունակ բնակչության հիմնական մասը զբաղվածություն է ունեցել տուֆ քարի արտադրության ձեռնարկությունում, Աղինի երկաթուղային կայարաններում, Լենինականի և Մարալիկի շինարարական, արտադրական և գյուղատնտեսության սպասարկման տարբեր կազմակերպություններում:

Սակայն նշված ձեռնարկությունները հիմնականում չեն գործում և համայնքի աշխատունակ բնակչության հիմնական մասը զբաղված է գյուղացիական տնտեսությամբ ու արտագնա աշխատանքով: Վերջին 20 տարիների ընթացքում արտագնա աշխատանքի բերումով համայնքից արտագաղթել են ավելի քան 25 ընտանիքներ:

Գյուղի վարելահողերի գերակշռող մասը լեռնատափաստանային սևահողեր են, որի ոռոգման, պարարտացման և ագրոտեխնիկական կանոնների ճիշտ կիրառման դեպքում կարող է ապահովվել հացահատիկի և բանջարաբուստանային մշակաբույսերի կայուն և բարձր բերքատվություն: Սակայն ոռոգման համակարգի բացակայության, գյուղատնտեսական մեքենաների մաշվածության, դիզելային վառելանյութի, պարարտանյութերի, թունաքիմիկատների գների թանկության, ինչպես նաև հակակարկտային կայանքների բացակայության պայմաններում դաշտավարության և անասնապահության բնագավառում համայնքի գյուղացիական տնտեսությունները ցանկալի արդյունք չեն ստանում:

Համայնքը բոլոր ժամանակներում մեծ կարևորություն է տվել սերունդների կրթության և դաստիարակության հարցերին: Իսահակյանի միջնակարգ դպրոցը բոլոր ժամանակներում ունեցել է բարի ավանդույթներ և ուսման բարձր առաջադիմություն:

Յուրանքանշյուր տարի, դպրոցի տասնյակ շրջանավարտներ տեղ են զբաղեցրել հանրապետության հեղինակավոր պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում: Սակայն բնակչության ներկայիս սոցիալական վատ պայմանների

պատճառով, քչերին է հաջողվում իրենց շնորհալի ու տաղանդաշատ երեխաներին բարձրագույն կամ մասնագիտական կրթության տալ:

Համայնքը գիտության, մշակույթի և արվեստի ոլորտներում տվել է տասնյակ նշանավոր մարդիկ:

Համայնքի նշանավոր մարդկանցից են՝

1.Ավետիք Բսահակյանը՝ հայ մեծ գրող

2.Վրույր Փենեսյանը՝ վիրաբույժ

Բսահակյանը ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես Հայրենական Մեծ պատերազմին, այնպես էլ Արցախյան ազատամարտին:

Հայրենական Մեծ պատերազմում գյուղը տվել է 123 զոհ:

Արցախյան ազատամարտի մասնակիցներ են համայնքի 17 ազատամարտիկներ:

1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ

Բսահակյան գյուղը գտնվում է Արագած լեռան արևմտյան մասում Ախուրյանի ջրամբարի հարևանությամբ: Իր հողային տարածքով սահմանակից է հարավային մասով Շիրակի մարզի Լուսաղբյուրի հողատարածքներին, հյուսիսային մասով Շիրակի մարզի Մարալիկի և Գուսանագյուղի, իսկ արևելյան մասով Աղինի հողատարածքներին, արևմտյան մասով սահմանակից է Թուրքիային, որից սահմանահատվում է Ախուրյանի ջրամբարով: Թուրքիայի սահմանից գտնվում է 500մ հեռավորության վրա և ընդգրկված է հանրապետության սահմանամերձ բնակավայրերի ցանկում,

Տարեկան տեղումների քանակը կազմում է 350-450 մմ: Ամենացածր ջերմաստիճանը եղել է -35C, իսկ ամենաբարձրը՝ +33C:

Գյուղը ունի կտրտված ռելիեֆ: Այն ծովի մակերևույթից բարձր է մոտավորապես 1530 մ: Ամենաբարձր ջերմաստիճանը, որը նկատվում է հուլիսի վերջին տասնօրյակին և օգոստոսի առաջին տասնօրյակին՝ +30+35C: Ունի խստաշունչ ձմեռ՝ ամենացածր ջերմաստիճանը հունվար ամսին կազմում է -30-35C:

Ջերմաստիճանային տատանման ամպլիտուտը կազմում է +35C -35C:

Կլիման խիստ ցամաքային է, որպես խմելու ջուր օգտագործում են արտեզյան հորերի ջուրը: Հողերը ոռոգելի չեն, չնայած որ ոռոգելու հնարավորություններ առկա են: Հաշվարկված է, որ 1993թվականից մինչև այսօր տարեկան մթնոլորտային տեղումների միջինը կազմ

ում է 450մմ -460մմ: Արձանագրված է եղել, որ ամենացածր տարեկան տեղումները եղել են 1965-ին՝ 219մմ. և 1989թվականին՝ 195մմ.:

Տարածքում գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը: Հարուստ է տուֆ քարով, հանքակոպիճով, ավազով ու կավով: Բնակավայրի տարածքը հարուստ է արդեզյան ջրերով:

Հողատարածքները մշտապես վտանգված են կարկտահարությամբ և տնական երաշտով: Տարածքը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926 և 1988թթ. աղետալի երկրաշարժերը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2213.7 հա., որից գյուղատնտեսական նշանակության հողեր են 1674.3 հա, այդ թվում 687.1հա վարելահող, 961.5հա արոտավայր և 25.65 հա այլ հողատեսքեր:

Համայնքի կառուցապատված տարածքը զբաղեցնում է 76.8 հա.:

Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 26 կմ, մարզկենտրոնից 21 կմ և մայրաքաղաքից՝ 124կմ հեռավորության վրա: Բնակավայրից 400 մ հեռավորությամբ է անցնում Գյումրի-Արմավիր-Երևան հանրապետական նշանակության ճանապարհը: Բնակավայրը Աղինի երկաթուղային կայարանից գտնվում է 800մ հեռավորության վրա:

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնի պատմական տեղեկությունների համաձայն գյուղը ձևավորվել է 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո: Բնակչության նախնիների մի մասը 1826-1828 թթ եկել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի և Մուշի գավառների գյուղերից, իսկ մնացած մասը 1915 թվականի եղեռնի պատճառով ներգաղթել են Ղարսի նահանգի Մուշ և Տարոն գավառների բնակավայրերից:

1981 թվականին Իսահակյան գյուղից 5 կմ հեռավորության վրա գտնվող Բարձրաշեն գյուղի /նախկին անվանումը Բաբոլու/ կոլտնտեսության լուծարման պատճառով, գյուղի բնակչության կեսը՝ թվով 48 ընտանիք, բնակություն են հաստատել Իսահակյանի նորակառույց ավանում:

1831 թվականին գյուղն ունեցել է 110, 1897-ին 750, 1926-ին՝ 740, 1939-ին՝ 958, 1959-ին 696, 1970-ին՝ 532, 1979-ին 893, իսկ 1986 թ. 1380 բնակիչ: Գյուղի բնակչության թվաքանակը աճել է ետեղեռնյան շրջանում: Սակայն հետագայում նրանց մեծ մասը արտագաղաթել է Հայաստանի այլ բնակավայրեր:

Վերջին 20 տարիներին համայնքի բնակչության թիվը նվազել է շուրջ 320 մարդով, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների թիվը նվազել է կրկնակի չափով և արձանագրվել է բնակչության կազմի ծերացում: Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 40-50 տոկոսը մեկնում են արտագնա սեզոնային աշխատանքի, շարունակվում է հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ (մարդ)

(Տվյալները լրացված են 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ)

- Ընդամենը՝ մշտական բնակչություն - 1064,
Այդ թվում՝ տղամարդ - 545, կին՝ - 519,
- Տնային տնտեսությունների թվաքանակը – 238,
- Առկա բնակչություն – 1036,
- Առկա տնային տնտեսությունների քանակը – 230,

Բնակչության բաշխվածությունն ըստ ազգային պատկանելության (առկա բնակչություն)

- Հայ – 1018,
- Ռուս - 2
- Եզդի – 15
- Հույն - 1:

Բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի (առկա բնակչություն)

Նախադպրոցական տարիքի երեխաներ / 0 – 6 տարեկան / - 75,

որից՝ մինչև 1 տարեկան – 10

1-2 տարեկան – 23,

3-4 տարեկան – 20,

5-6 տարեկան – 22:

- Դպրոցական տարիքի երեխաներ / 7 – 17տարեկան / - 109,
որից՝ 7-10 տարեկան – 32,
11-14 տարեկան – 38,
15-17 տարեկան – 39:
- Հասուն տարիքի բնակչություն / 18-64 / - 774,
որից՝ 18-22 տարեկան – 66,

23-45 տարեկան – 372,

46-64 տարեկան – 336:

- Տարեց բնակչություն / 65 և ավելի / - 78:
- Համայնքի ընտրողների թիվը - 787:

Ծնունդ, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն (վերջին 3 տարիների միջին ցուցանիշ)

- Ծնունդ - 35,
Որից կենդանի ծնունդ – 35,
- Մահ – 7,
- Ամուսնություն – 15,
- Ամուսնալուծություն – 0:

Համայնքի սոցիալական խմբերի ներկայացվածությունը

- Հաշմանդամներ – 32, այդ թվում կանայք՝ 18,
որից՝ հաշմանդամ երեխա – 0,
- Միակողմանի ծնողազուրկ երեխա - 2,
- Ամուսնալուծված անձի երեխա – 2,
- Կենսաթոշակառուներ – 109,
- Միայնակ չաշխատող կենսաթոշակառուներ – 6,
- Տարեց կենսաթոշակառուներ /75 տարեկան և բարձր/ - 36,

Համայնքի տնային տնտեսությունների սոցիալական խմբերի ներկայացվածությունը

- Երեք և ավելի երեխաներ ունեցող /0-16 տարեկան/ – 23,
- Միայն կենսաթոշակառուներից կազմված /65 և ավելի տարեկան/ - 18,
- Հաշմանդամ երեխա ունեցող – 0,
- Մինչև 6 տարեկան երեխա ունեցող – 61,
- Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը՝ 24:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության բաշխումն ըստ զբաղվածության հիմնական ճյուղերի (մարդ)

- Գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 595,
- Վարձու աշխատանք գյուղատնտեսական ոլորտում – 18,

- Վարձու աշխատանք ոչ գյուղատնտեսական ոլորտում, մասնավոր – 32,
- Վարձու աշխատանք պետական ոլորտում – 54,
- Ոչ գյուղատնտեսական ինքնագրավածություն – 4,
- Աշակերտներ /16 տարեկան և բարձր/ - 21,
- Ուսանողներ – 25,
- Բանակում ծառայողներ – 28,
- Չունեն գրավածություն /տնտեսապես ոչ ակտիվ/ – 153,

Համայնքում գրավածների բաշխվածությունն ըստ ոլորտների

- Գյուղատնտեսություն – 595,
- Հանքագործական արդյունաբերություն – 0,
- Էլեկտրոէներգիայի, գազի ջրամատակարարման ոլորտի սպասարկում – 2,
- Շինարարություն – 23,
- Առևտուր և այլ սպասարկումներ – 7,
- Գյուղատնտեսական ծառայություններ – 18,
- Տրանսպորտ և կապ – 6,
- Տեղական ինքնակառավարում – 10,
- Կրթություն – 27,
- Առողջապահություն և սոցիալական ծառայություններ – 2,
- Կոմունալ, անհատական ծառայությունների մատուցում – 4
- Ոսանողներ, ավարտական դացարների աշակերտներ, բանակում ծառայողներ – 83:

Միգրացիա /2016 թվականի ընթացքում/

- Այլ բնակավայր տեղափոխված ընտանիքների թիվը – 7,
որից՝ Հայաստանում այլ բնակավայր՝ 6:
- Արտերկիր՝ 1:
- Մշտական բնակության համար համայնք տեղափոխված ընտանիքների թիվը՝ 1,
- որից Հայաստանի այլ բնակավայրերից՝ 1:
- Արտագնա աշխատանքի մեկնողների թիվ – 155 (131 տնային տնտեսություններից):

Համայնքի հասուն տարիքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի

- Տարրական – 7,
- հիմնական – 39,
- միջնակարգ -786,
- միջնակարգ մասնագիտական – 52,
- բարձրագույն - 77:

1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի /ավագանու 5 անդամ/ և համայնքի ղեկավար: 2016 թ. հոկտեմբերի 2-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով, առաջադրված 1 թեկնածուից, համայնքի ղեկավար է ընտրվել Արտավազդ Արսենյանը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավարի աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

Հայեդորդական պաշտոններ

Համայնքի ղեկավարի տեղակալ:

Համայնքային ծառայության պաշտոններ՝

1. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար – 1 միավոր,
2. գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ – 1 միավոր,
3. գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ – 2 միավոր,

Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ

1. Համակարգչի օպերատոր – 1 միավոր,
2. Զրագծի փականագործ– 1 միավոր,
3. Գրադարանավար - 1 միավոր,
4. Ծառայողական ավտոմեքենայի վարորդ – 1 միավոր,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

N	Անուն, ազանուն	Ծննդյան թիվը	Կրթությունը	Կուսակցական պատկանելությունը
1.	Շիրակ Մկոյան	1958	Միջնակարգ մասնագիտական	անկուսակցական

2.	Վարազդատ Սմբատյան	1963	Միջնակարգ մասնագիտական	ՀՀԿ
3.	Մհեր Մանասյան	1987	Միջնակարգ	անկուսակցական
4.	Իլիչ Գևորգյան	1965	Միջնակարգ	անկուսակցական
5.	Ալբերտ Խաչատրյան	1975	Միջնակարգ	անկուսակցական

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	Տոկոսը համայնքի ղեկավարի աշխատավարձի նկատմամբ	Անուն, ազանունը	Կրթությունը	Ծննդյան թիվը
<i>Հայեցողական պաշտոններ</i>						
1.	Համայնքի ղեկավարի տեղակալ	119000	54.1	Վախթանգ Գալստյան	միջ/մաս	1953
<i>Համայնքային ծառայության պաշտոններ</i>						
1.	Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	145000	65.9	Վարդան Բարսեղյան	բարձրագույն	1971
2.	Առաջատար մասնագետ-հաշվապահ/3.1-1/	143000	65.0	Արտուշ Գևորգյան	միջ/մաս	1961
3.	Առաջին կարգի մասնագետ/3.2-1	103000	46.8	Արմեն Պետրոսյան	միջ/մաս	1967
4.	Առաջին կարգի մասնագետ/3.2-2	103000	46.8	Արթուր Արսենյան	միջ/մաս	1969
<i>Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ</i>						
1.	Համակարգչի օպերատոր-գործավար	118000	53.6	Անահիտ Արսենյան	միջ/մաս	1964
2.	Ջրագծի փականագործ	97000	44.1	Ժորա Հովհաննիսյան	միջ/մաս	1957
3.	Գրադարանավար	93000	42.3	Աիդա Մկոյան	միջ/մաս	1957
4.	Ծառայողական ավտոմեքենայի վարորդ	85000	38.6	Արտակ Սահակյան	միջնակարգ	1975այ
<i>Աշխատակազմի աշխատակիցների ընդհանուր քանակը</i>		9 /ինն/				

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում կազմավորվել և գործում են հետևյալ մշտական հանձնաժողովները՝

- Վարչական հարցերի հանձնաժողով,
- Անչափահասների հարցերի հանձնաժողով,
- Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողով,
- Կանանց և երեխաների հարցերի հանձնաժողով,
- արտակարգ իրավիճակներից հետո ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով,
- Սոցիալական ապահովության հարցերի հանձնաժողով:

Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը և ներքին հարաբերությունները գրաֆիկական տեսքով ներկայացված է թիվ 1 հավելվածում:

1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի <<Համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին>> թիվ 51 որոշմամբ:

Համայնքի սեփականություն հանդիսացող բոլոր շենքերն ու շինությունները կառուցվել են 1978-1980 թվականներին, նոր ավանի կառացման ժամանակ:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի: Քայքայված և անբարեկարգ վիճակում է մշակույթի տան, մանկապարտեզի, կենցաղի տան, անասնաբուժական կայանի շենքերը, որոնք կառուցման օրվանից մինչև օրս վերանորոգման չեն ենթարկվել:

Բնակավայրի խմելու ջուրը մատակարարվում է խորքային մեկ պոմպի և 8224 մ ընդհանուր երկարություն ներհամայնքային ցանցի միջոցով:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են ինչպես մայրուղի բնակավայրի կմ, Բսահակյան Բարձրաշեն 5 կմ միջհամայնքային նշանակության ճանապարհները, այնպես էլ շուրջ 6կմ ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհները: Դաշտամիջյան

Ճանապարհների առանձին տեղամասեր գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել են անանցանելի և լուրջ դժվարություններ են ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ: Համայնքի ուժերով և ներգրավված միջոցներով պարբերաբար կատարվել են միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների փոսալցման աշխատանքներ, սակայն այն բավարար համարել չի կարելի:

Համեմատաբար բարվոք վիճակում է գյուղապետարանի շենքը, որը 2010-11 թթ վերանորոգվել է համայնքի բյուջեի միջոցներով: Նորացման կարիք ունի գյուղապետարանի գույքը:

Բուժ. մանկաբարձական կետը 2005 թվականին նորոգվել է ԱՄՆ դեսպանության <<ՆՈՎԱ>> ծրագրի և համայնքի կողմից կատարված ներդրումներով:

<<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի>> շրջանակներում 2010 թվականին շահագործման է հանձնվել բնակավայրի գազաֆիկացման համակարգը: Սակայն համապատասխան ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով ոչ բոլոր տնտեսություններ են կարողացել միանալ գազատարին:

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ

N	Գույքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի արժեքը /հազար դրամ/	Հաշվեկշռային ընդհանուր արժեքը /հազար դրամ/	Գույքի տեխնիկական վիճակի նկարագրությունը
1.	Գյուղապետարանի շենք	հատ	1	5571.7	5571.7	տանիքը ենթակա է հիմնանորոգման
2.	Մանկապարտեզի շենք	հատ	1	13145.6	13145.6	ենթակա է հիմնանորոգման
3.	Կենցաղի շենք	հատ	1	6325.0	6325.0	ենթակա է նորոգման
4.	Մշակույթի տուն	հատ	1	15260.0	15260.0	ենթակա է հիմնանորոգման
5.	Հացահատիկի պահեստ	հատ	1	2315.0	2315.0	ենթակա է հիմնանորոգման
6.	Տեխնիկական սպասարկման կայան	հատ	1	1256.0	1256.0	գտնվում է կիսաքանդ վիճակում
7.	Կոյուղագիծ	գծ.մ.	8350	12601.0	105222.1	ենթակա է նորոգման/1.5 կմ/

8.	Խմելու ջրագիծ	գծ.մ.	8224	18214.0	149798.0	գերազանց
9.	Խմելու ջրի ավազան /300 խ.մ.	հատ	1	820.0	820.0	գերազանց
10.	ԳԱԶ-24 մակնիշի ավտոմեքենա	հատ	1	1850.0	1850.0	բավարար
11.	Երկաթյա պահարան	հատ	6	10330	62.0	բավարար
12.	Գրասեղան	հատ	6	15000	90.0	բավարար
13.	Գրասենյակային կահույք	կազմ	1	151.9	151.9	բավարար
14.	Գրքապահարան	հատ	7	6215	43.5	բավարար
15.	Դաշնամուր	հատ	1	42000	42.0	բավարար
16.	Փոքր պահարան	հատ	2	6000	12.0	բավարար
17.	Գրադարակ երկաթյա	հատ	15	3060	46.0	բավարար
18.	Քարտարան	հատ	1		1.5	բավարար
19.	Ընթերցասեղան	հատ	1		12.0	բավարար
20.	Գրքեր	հատ	7063	0.297	2097.2	բավարար
21.	Համակարգիչ	հատ	1	238.6	238.6	Ենթակա է դուրսգրման
22.	Մոնիտոր	հատ	1	81.7	81.7	բավարար
23.	Մկնիկ	հատ	1	5.5	5.5	բավարար
24.	Տպիչ	հատ	1	109.6	109.6	բավարար
25.	Ստեղնաշար	հատ	1	8.5	8.5	բավարար
26.	Բարձրախոս	հատ	1	6.0	6.0	բավարար
27.	Պատճենահանման սարք	հատ	1	191.2	191.2	բավարար
28.	Շերտավարագույր	քառ.մ	49.7	7000	348.0	բավարար
29.	Կավրալիտ	քառ.մ	87.9	3800	334.0	բավարար
30.	Համակարգիչ	հատ	1	241.2	241.2	բավարար
31.	Պոմպ	հատ	1	717.2	717.2	բավարար
32.	Լրագրասեղան	հատ	1	32.0	32.0	լավ
33.	Աթոռ	հատ	6	18.0	108.0	լավ
34.	Տպող սարք	հատ	1	133.5	133.5	լավ
	ԸՆԴԱՄԵՆԸ				306676.5	

1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնակավայրը կոյուղացված է: Կեղտաջրերի հեռացման համակարգն ունի 8.35 կմ ընդհանուր երկարության, որից 2016թվականին վերանորոգվել է 2կմ: Ցանցի քայքայվածության պատճառով առանձին տնտեսությունների կողմից կեղտաջրերի հեռացումը կատարվում է անհատական խորքային հորերի միջոցով:

Բնակավայրում կանոնակարգված աղբահանություն չի իրականացվում: Կենցաղային աղբը համայնքից հեռացվում է տնային տնտեսությունների և գյուղապետարանի կողմից կազմակերպվող սանիտարական մաքրման օրերի միջոցով:

Բնակավայրը չունի համայնքային նշանակության հանգստի գոտի: Հատկապես ամռան ժամանակաշրջանում բարձր է օդի փոշոտվածությունը:

Բնակավայրում վտանգավոր արտանետումներ չկան:

1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքում կա 131 բազմաբնակարան բնակելի տներ՝ 19244 քառ.մ ընդհանուր մակերեսով և 8 անհատական առանձնատներ՝ 790 քառ.մ ընդհանուր մակերեսով: Բազմաբնակարան բոլոր բնակելի տները կառուցվել են 1978-1980 թթ նոր ավանի կառուցման ժամանակ: Բնակավայրը գտնվում է 1988թ. Սպիտակի աղետալի երկրաշարժի գոտում: Համայնքի բնակֆոնդի մոտ 40 %-ը ստացել է 2-3 աստիճանի վնասվածություն և նրանց հիմնական մասը ենթակա է ուժեղացման ու վերանորոգման:

Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն համայնքի 15 երիտասարդ ընտանիքներ:

Համայնքում կա 5 բնակելի տների անավարտ շինարարություն, որոնք շուրջ 20 տարի է ինչ դադարեցված են կառուցողների ոչ բավարար ֆինանսական կարողությունների պատճառով:

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՍԵՆՑԱԿՆԵՐԻ ԹՎԻ

N	Սենյակների թիվը	Կառուցման տարեթիվը	Բնակարանների թիվը	Բնակարանների ընդհանուր մակերեսը /քառ.մ/	Մեյսմոկայունությունը
	Ընդամենը բնակարաններ	1980թ.	224	19240	9
1.	1 սենյականոց բնակարան	1980թ.	-	-	-
2.	2 սենյականոց բնակարան	1980թ.	25	1477.5	9
3.	3 սենյականոց բնակարան	1980թ.	81	6245.1	9
4.	4 սենյականոց բնակարան	1980թ.	118	11481.4	9

ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՈՒՆԵՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ

N	Խնդրի նկարագրությունը	Շենքերի քանակը	Բնակչության
---	-----------------------	----------------	-------------

			թվաքանակը
1.	Վթարային շենքեր	1	2
2.	Տանիքի նորոգման խնդիր ունեցող	60	320
3.	Կոյուղացման խնդիր ունեցող	18	76
4.	Հիմնանորոգման խնդիր ունեցող	2	8
5.	Ընթացիկ վերանորոգման խնդիր ունեցող	15	77
6.	Շրջակայքի բարեկարգման խնդիր ունեցող	131	1112

1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է բնակավայրում տեղադրված 8 լիտր/վրկ հզորության 1 խորքային պոմպի միջոցով: Խմելու ջրի որակը, որը պարբերաբար ստուգվում է հակահամաճարակային ծառայության կողմից, բնութագրվում է բավարար և խմելու համար պիտանի:

Համայնքը չունի ոռոգման համակարգ:

Բնակավայրի հարևանությամբ է գտնվում Ախուրյանի ջրամբարը: Համապատասխան համակարգի կառուցման դեպքում առկա հսկայածավալ ջրային պաշարները կարող են օգտագործվել համայնքի ոռոգման կարիքների համար:

1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

Անբարեկարգ և քայքայված վիճակում են ինչպես մայրուղի բնակավայր1կմ, Իսահակյան Բարձրաշեն 5 կմ միջհամայնքային նշանակության ճանապարհները, այնպես էլ շուրջ 6 կմ ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհները: Դաշտամիջյան ճանապարհների առանձին տեղամասեր գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել են անանցանելի և լուրջ դժվարություններ են ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ: Համայնքի ուժերով և ներգրավված միջոցներով պարբերաբար կատարվել են միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների փոսալցման աշխատանքներ, սակայն այն բավարար համարել չի կարելի:

Բնակավայրի փոստային սպասարկումն իրականացվում հարևան Լուսաղբյուր գյուղի բաժանմունքի կողմից:

Համայնքում կա բնակիչների սեփականությունը հանդիսացող 86 մարդատար ավտոմեքենա:

Բնակավայրը ապահովված է <<ՎԻՎԱՍԵԼ ՄՏՍ>>, <<ԲԻԼԱՅՆ>> բջջային և <<Արմենտելի>> կողմից սպասարկվող ֆիքսված հեռախոսակապով: Ֆիքսված հեռախոսակապով են ապահովված համայնքի 5 տնտեսություններ:

Բնակավայրն ընդունում է 4 հանրապետական և 3 մարզային հեռուստաալիքներ: Բավարար վիճակում է գտնվում ինտերնետային կապը:

Բնակավայր - մարզկենտրոն տրանսպորտային կապն ապահովվում է միկրոավտոբուսի 2-3 երթուղու միջոցով / մեկ ուղևորի փոխադրավարձը կազմում է 250 դրամ/: Մայրաքաղաքի և հարևան համայնքների հետ կապն ապահովվում է Գյումրի-Արմավիր-Երևան երթուղային ավտոբուսների և միկրոավտոբուսների միջոցով:

1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է: Բնակչությունը սերտ կապեր ունի մայրաքաղաքի, մարզկենտրոնի, նախկին շրջկենտրոնի և շրջակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցում է ինչպես հանրապետությունում գործող քաղաքական և հասարակական կազմակերպությունների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

